

Կազմված է

ՏՊԱԳՐՎԱԾ Է ԸՆԴԱՄԵՆԸ 5 ՕՐԻՆԱԿ
ՕՐԻՆԱԿ 5

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2013ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 29-Ի

N 78-Ա ՈՐՈՇՄԱՄԲ

Գ Ր Ա Ն Ց Վ Ա Ծ Է՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱՔԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ

ԳՐԱՆՑՄԱՆ N _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՎԿԱՅԱԿԱՆ N _____

_____ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
Կ.Տ.

ՀՎՀՀ N _____

<< >> _____ 2013 ԹՎ.

Կ.Տ.

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ

<<<<ԿՈՒՄԱՅՐԻ>> ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԳԵԼՈՑ -ԹԱՆԳԱՐԱՆ>>

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Գյումրի քաղաքի <<Կումայրի>> պատմամշակութային արգելոց-թանգարան համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող և գիտալուսավորչական, գիտատեղեկատվական, մշակութային գործունեություն իրականացնող կազմակերպություն է, որը ստեղծվել է Գյումրու քաղաքապետարանի (այսուհետ՝ հիմնադիր) որոշմամբ, Գյումրի քաղաքի վարչական տարածքում գտնվող պատմական, ճարտարապետական, հնագիտական կամ այլ մշակութային արժեք ներկայացնող անշարժ հուշարձանների, հուշարձան-համալիրների ուսումնասիրման, հանրահռչակման և օգտագործման, ինչպես նաև համայնքային սեփականություն համարվող պատմամշակութային անշարժ հուշարձանների, հուշարձան համալիրների, բնապատմական, պատմական միջավայրի, պատմամշակութային հողերի և դրան հարող տեղանքապատկերների (լանդշաֆտի) ամբողջական պահպանումն իրականացնելու նպատակով:

2. Կազմակերպության գործունեությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին, Քաղաքաշինության մասին, Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին ՀՀ օրենքներով, օրենսդրական այլ ակտերով ու սույն կանոնադրությամբ:

3. Կազմակերպությունը՝ որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտականությունների համար պատասխանատու է այդ գույքով: Կազմակերպությունը կարող է իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

4. Կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն անվանումներով կլոր կնիք, դրոշմակնիք, ձևաթղթեր և անհատականացման այլ միջոցներ:

5. Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, հաշվարկային հաշիվ բանկում՝ Հայաստանի Հանրապետության արժույթով և արտարժույթով:

6. Կազմակերպությունն իր պարտականությունների համար պատասխանատու է իրեն պատկանող գույքով:

Հիմնադիրը պատասխանատվություն չի կրում Կազմակերպության պարտավորությունների, իսկ Կազմակերպությունը՝ հիմնադրի պարտավորությունների համար:

Հիմնադիրը պատասխանատվություն է կրում մինչև Կազմակերպության պետական գրանցումը ծագած՝ Կազմակերպության ստեղծման հետ կապված պարտավորությունների համար:

7. Կազմակերպության անվանումն է՝

Հայերեն լրիվ՝ <<Կումայրի>> պատմամշակութային արգելոց-թանգարան>>-համայնքային ոչ առևտրային կազմակերպություն,

կրճատ՝ - <<Կումայրի>> արգելոց-թանգարան>> ՀՈԱԿ

Ռուսերեն լրիվ՝ муниципальная не торговая организация- “Историко-культурный музей-заповедник “Кумайри”,

կրճատ՝ - МНТО музей-заповедник “Кумайри”,

անգլերեն լրիվ՝ “Kumayri” historic cultural preserve museum-community none trade organization

կրճատ՝ - “Kumayri” prezerve CNTO.

8. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ - Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Վարդանանց 1, փոստային ինդեքս՝ 3104):

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ և ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

9. Կազմակերպության գործունեության առարկան և նպատակներն են Կումայրի-Գյումրի-Ալեքսանդրապոլ-Լենինական պատմական ժամանակահատվածում ձևավորված, և համայնքային սեփականություն համարվող քաղաքաշինական միջավայրի պահպանման ու կառուցապատման կարգավորման գոտիներում առկա պատմական, հնագիտական, ճարտարապետական անշարժ հուշարձանների, հուշարձան-համալիրների, բնապատմական միջավայրի, պատմամշակութային

հողերի, տեղանքապատկերների (լանդշաֆտների), մշակութային այլ արժեքների պահպանությունը, ուսումնասիրումը, հանրահռչակումը և օգտագործման կարգավորումը:

10. Իր գործունեության առարկայի և նպատակներին համապատասխան Կազմակերպությունը՝

10.1 իրականացնում է համայնքային սեփականություն համարվող պատմամշակութային անշարժ հուշարձանների և պատմամշակութային հողերի պահպանությունը: Վերահսկում է սեփականության իրավունքով իրավաբանական և ֆիզիկական անձանց պատկանող, կամ դրանց տնօրինման իրավունքով օգտագործման հանձնված հուշարձանների, պատմամշակութային հողատարածքների պահպանական պարտավորագրերով ստանձնված պարտավորությունների կատարումը:

10.2 իրականացնում է արգելոցի տարածքում գտնվող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանվածության վիճակի դիտանցում, կատարում դրանց փաստավավերագրումը (չափագրում, լուսանկարում և այլն), կազմակերպում դրանց վերականգնումն ու պահպանումը:

10.3 Ստեղծում և վարում է հաշվառված անշարժ հուշարձանների ու պատմամշակութային նշանակություն ունեցող հողատարածքների կադաստրը:

10.4 Վկայագրում, չափագրում և լուսանկարում է Գյումրի քաղաքի վարչական սահմանում գտնվող պատմամշակութային նորահայտ անշարժ հուշարձանները, ներկայացնում առաջարկություն դրանք սահմանված կարգով մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակներում ներառելու վերաբերյալ:

10.5 Կազմակերպում և իրականացնում է քաղաքի ավանդական կենցաղին ու մշակույթին (այդ թվում նաև ոչ նյութական մշակույթին) և այլ բնագավառներին նվիրված բանահյուսական նյութերի հավաքչական աշխատանքներ:

10.6 Կազմակերպում և իրականացնում է պատմամշակութային ժառանգության պահպանության, ուսումնասիրման, վերականգնման, օգտագործման ու հանրահռչակման խնդիրներին նվիրված գիտական նստաշրջաններ, համաժողովներ, գիտագործնական սեմինարներ ու խորհրդակցություններ կամ մասնակցում դրանց աշխատանքներին:

10.7 Մասնակցում է արգելոց-թանգարանի տարածքում, նրան հարակից կառուցապատման կարգավորման գոտիներում, ինչպես նաև դրանցից դուրս գտնվող պատմամշակութային հուշարձանների պահպանման գոտիների տիրույթում ծրագրվող քաղաքաշինական միջամտությունների ճարտարապետահատակագծային առաջադրանքների ձևավորմանը:

10.8 Իր իրավասությունների սահմաններում արգելում կամ դադարեցնում է արգելոց-թանգարանի տարածքում և արգելոցի կառուցապատման կարգավորման ու բնապատկերի (լանդշաֆտի) պահպանման գոտիներում որևէ կառուցապատում, եթե դրանք իրականացվում են գործող օրենսդրության պահանջների կամ նախագծային խախտումով:

10.9 Պարտադիր կարգով, որպես անդամ, մասնակցում է արգելոց-թանգարանի պահպանման տարածքում ու կառուցապատման կարգավորման գոտիներում իրականացվող վերականգնողական կամ այլ բնույթի շինարարական օբյեկտների ավարտման-ընդունման հանձնաժողովների աշխատանքներին:

10.10 Վերահսկում և ապահովում է արգելոց-թանգարանի տարածքում, արգելոցի կառուցապատման կարգավորման ու բնապատկերի լանդշաֆտի պահպանման գոտիներում սահմանված ռեժիմի պայմանակարգի, գոտևորման նախագծերով նախատեսված կարգի ու քաղաքաշինական չափորոշիչների պահանջները: Օրենսդրությամբ սահմանված կարգով հուշարձանների սեփականատերերի, օգտագործողների հետ կնքում հուշարձանների պահպանական պարտավորագրեր և մեկական օրինակ ներկայացնում հիմնադրին և բնագավառի լիազորված մարմնին:

10.11 Արգելոց-թանգարանն իր բնույթին և արգելոց-թանգարանի ֆոնդերի համալրման հայեցակարգին համապատասխան կազմակերպում և համալրում է արգելոց-թանգարանի թանգարանային ֆոնդը: Թանգարանային ֆոնդերի պահպանության և հաշվառման հրահանգին համապատասխան իրականացնում է թանգարանային հավաքածուների և առարկաների հաշվառումը, ստեղծում դրանց և արգելոցի տարածքում գտնվող անշարժ հուշարձանների էլեկտրոնային տվյալների շտեմարանի:

10.12 Պատրաստում և հրատարակում է աշխատություններ, մենագրություններ, ուղեցույցեր, կատալոգներ, գիտահանրամատչելի, գիտատեղեկատու, քարոզչական և գովազդային նյութեր:

10.13 Կազմակերպում է մշտական, ժամանակավոր և շրջիկ ցուցադրություններ ու ցուցահանդեսներ:

10.14 Իրականացնում է պատմամշակութային ժառանգության վերաբերյալ քարտզական, գիտալուսավորչական և կրթական միջոցառումներ:

10.15 Կազմակերպում է պատմամշակութային արժեքների վերականգնման, գիտամեթոդական խորհրդի, թանգարանային հավաքածուի գնման հանձնաժողովի աշխատանքները:

10.16 Իրականացնում է թանգարանային առարկաների և հավաքածուների հայտնաբերում և հավաքում՝ գիտարշավների, գնումների, նվիրատվությունների, կտակների միջոցով:

10.17 Քննարկում և իր իրավասության սահմաններում որոշումներ է ընդունում Գյումրու քաղաքային համայնքի տարածքում պետականորեն հաշվառված պատմամշակութային ժառանգության օբյեկտների պահպանվածությանը սպառնացող ցանկացած բնույթի աշխատանքների կամ տնտեսական գործունեության դադարեցման հետ կապված խնդիրների վերաբերյալ: Իրավապահ պատկան մարմիններին փոխանցելու նպատակով կազմում է ակտեր և արձանագրություններ պատմամշակութային անշարժ հուշարձաններին, դրանց տարածքներին հասցված վնասին համապատասխան պատասխանատվություն սահմանելու համար:

10.18 Արգելոց-թանգարանների ու պատմամշակութային անշարժ հուշարձանների և դրանց տարածքների պահպանության պայմանակարգն ու կանոնակարգը խախտելու դեպքում հայց է հարուցում հուշարձանի սեփականատիրոջ, օգտագործողի, տնօրինողի դեմ:

10.19 Կազմակերպում և իրականացնում է արգելոց-թանգարանի և քաղաքի վարչական սահմանի տարածքում գտնվող պատմամշակութային ժառանգության օբյեկտների ուսումնասիրումն ու հետազոտումը:

10.20 Որպես պատվիրատու, գործող կարգի համաձայն՝ բնագավառի լիազորված մարմինների պատմամշակութային ժառանգության մասով ՀՀ մշակույթի նախարարության, քաղաքաշինական մասով՝ ՀՀ քաղաքաշինության նախարարության հետ համաձայնեցնում, ապա հաստատում է իրեն սեփականության կամ օգտագործման իրավունքով հանձնված հուշարձանների ամրակայման, վերականգնման, նորոգման և հարմարեցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը:

10.21 Մշակում, լիազորված պետական մարմնի հետ համաձայնեցնում և հիմնադրի հաստատմանն է ներկայացնում արգելոց- թանգարանի, պատմամշակութային անշարժ հուշարձանների պահպանության և օգտագործման հեռանկարային զարգացման նախագիծը: Սահմանում է իր մշակութային գործունեության հիմնական ուղղություններն ու առաջնահերթության կարգով կազմում դրանց իրականացման ծրագրերը:

10.22 Պատմամշակութային անշարժ ժառանգության սեփականատերերին, տնօրինողներին և օգտագործողներին առաջարկություն է ներկայացնում իրենց տնօրինման և օգտագործման ու նորոգման հարցերի վերաբերյալ:

10.23 Հիմնադրի որոշմամբ և օրենքով սահմանված կարգով Կազմակերպությունը ստեղծում է հիմնադրամներ ու մշակութային ուղղվածություն ունեցող գիտաարտադրական, գիտավերականգնման, զբոսաշրջային և այլ ձեռնարկատիրական կառույցներ:

11. Կազմակերպությունը, որպես ձեռնարկատիրական գործունեություն իրականացնում է՝

11.1 հուշանվերների պատրաստում և իրացում,

11.2 պայմանագրային հիմունքներով իրավաբանական և ֆիզիկական անձանց հուշարձաններին վերաբերող փաստավավերագրական նյութերի պատրաստում և տրամադրում,

11.3 ժողովրդական վարպետների ստեղծագործությունների ցուցահանդեսների, ցուցահանդես-վաճառքների կազմակերպում,

11.4 քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի և ինժեներական սարքավորանքի ուրվագծերի (բնակավայրերի և թաղամասերի պատմամշակութային հիմնավորման, պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների բարեկարգման, վերականգնման և այլ նախագծերի) մշակում,

11.5 հրատարակչական գործ,

11.6 զբոսաշրջիկների սպասարկում:

12. Կազմակերպության գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործվում է իր կանոնադրական նպատակների իրականացման համար: Արգելոց-թանգարանի շահույթի օգտագործման կարգը սահմանում է հիմնադիրը:

13. Կազմակերպությունն իր հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները վճարում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար նախատեսված կարգով ու չափով:

III. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

14. Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև կազմակերպության գործունեության ընթացքում արտադրված ու ձեռք բերված գույքից:

Կազմակերպության գույքի ձևավորման աղբյուր կարող են հանդիսանալ նաև Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների իրավաբանական ու ֆիզիկական անձանց կատարած ներդրումներ, այդ թվում՝ բարեգործական, հովանավորչական, նպատակային նվիրատվություններն ու հատկացումները:

15. Կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) սույն կանոնադրությանը համապատասխան՝ իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

16. Կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է կազմակերպությունը:

17. Կազմակերպության սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

18. Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների արժանահավատությունը ենթակա է աուդիտի (վերստուգման)՝ հիմնադրի կողմից ընտրված անկախ աուդիտորական կազմակերպության կամ Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից:

IV. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՑՎԱԾ ԳՈՒՅՔԸ

19. Հիմնադրի որոշմամբ կազմակերպությանն անժամկետ ու անհատույց օգտագործման իրավունքով ամրացվում է ցանկացած գույք:

20. Հիմնադիրն իրավունք ունի վերցնելու իր կողմից կազմակերպությանն ամրացված գույքը:

21. Կազմակերպությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, հանձնելու անհատույց օգտագործման:

22. Կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը հանձնելու վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի որոշմամբ: Ամրացված գույքի օգտագործման արդյունքում կազմակերպության ստացած եկամուտները կազմակերպության սեփականությունն են և ուղղվում են Կազմակերպության կանոնադրական գործունեության նպատակներին: Կազմակերպությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:

23. Հիմնադրի կողմից կազմակերպությանն ամրացված անշարժ գույքի կամ պետական պարտադիր գրանցման ենթակա գույքի նկատմամբ կազմակերպության օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:

V. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

24. Կազմակերպության կառավարումն իրականացնում է հիմնադիրը, կոլեգիալ կառավարման մարմինը՝ խորհուրդը և գործադիր մարմինը՝ տնօրենը:

25. Կազմակերպության հիմնադիրը՝

25.1 ապահովում է Կազմակերպության բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրա չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

25.2 ձևավորում ու հաստատում է Կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի կազմը,

25.3 սույն կանոնադրությամբ սահմանված կարգով պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Կազմակերպության տնօրենին.

25.4 հաստատում է Կազմակերպության տարեկան ծախսերի նախահաշիվը.

25.5 իրականացնում է Կազմակերպության գործունեության վերահսկողությունը.

25.6 կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում Կազմակերպության տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները.

25.7 լսում է Կազմակերպության գործունեության մասին հաշվետվությունները, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները.

25.8 հաստատում է Կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող՝ պետությանը պատկանող գույքի կազմը.

25.9 վերահսկողություն է իրականացնում Կազմակերպությանն ամրացված պետական սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ.

25.10 համաձայնություն է տալիս Կազմակերպության գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.

25.11 հաստատում է Կազմակերպության տարեկան հաշվետվություններն ու տարեկան հաշվեկշիռը.

25.12 իրականացնում է <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով, հիմնադրի որոշումներով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

26. Կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը, որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է հիմնադիրը:

27. Կազմակերպության տնօրենին պաշտոնի նշանակելն ու պաշտոնից ազատելը կարգավորվում է <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով:

Կազմակերպության տնօրենի հետ կնքվում է պայմանագիր, ուր սահմանվում են Կազմակերպության տնօրենի իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը և փոխհարաբերությունները հիմնադրի հետ, նրա աշխատանքի վարձատրման պայմանները, պայմանագրի դադարման՝ <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված բոլոր հիմքերն ու այլ դրույթներ, որոնք պայմանավորվող կողմերն անհրաժեշտ կգտնեն: Պայմանագրի դրույթները չեն կարող հակասել Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրության պահանջներին՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

28. Կազմակերպության տնօրենն օրենքով, հիմնադրի որոշումներով ու սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորության սահմաններում ղեկավարում է Կազմակերպության գործունեությունը և կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, հիմնադրի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

29. Կազմակերպության տնօրենը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքներից:

30. Կազմակերպության տնօրենը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով կազմակերպությանը և (կամ) համայնքին պատճառված վնասի համար: Նրա լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառած վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար:

31. Կազմակերպության տնօրենը՝

31.1 առանց լիազորագրի հանդես է գալիս Կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերը և կնքում գործարքները.

31.2 Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, հիմնադրի որոշումներով ու սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է Կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

31.3 տալիս է Կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

31.4 աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է Կազմակերպության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ ու նշանակում կարգապահական տույժեր.

31.5 բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.

31.6 կատարում է պարտականությունների բաշխում իր տեղակալների միջև.

31.7 հիմնադրի հաստատմանն է ներկայացնում Կազմակերպության կառուցվածքը, աշխատողների թիվը.

31.8 կոլեգիալ կառավարման մարմնի հաստատմանն է ներկայացնում կազմակերպության գործունեության ծրագրերը, կանոնակարգող ներքին փաստաթղթերը, ինչպես նաև Կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանումների կանոնակարգերը, ներքին կարգապահական և այլ կանոնները, մասնաճյուղերի կանոնադրությունը.

31.9 սահմանված կարգով հիմնարկին է ներկայացնում Կազմակերպության տարեկան ծախսերի նախահաշիվը.

31.10 հաստատում է ձեռնարկատիրական գործունեության եկամուտների և ծախսերի նախահաշիվը.

31.11 օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իր լիազորության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

31.12 իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ լիազորություններ:

32. Կազմակերպության տնօրենը պարտավոր է չկատարել հիմնադրի Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամանները, հրահանգները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:

33. Կազմակերպության տնօրենի բացակայության դեպքում նրան փոխարինում է տնօրենի կողմից լիազորված կազմակերպության աշխատակիցը:

34. Կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմինը Կազմակերպության մասնագիտական խորհուրդն է (այսուհետ՝ Խորհուրդ).

35. Խորհուրդը ձևավորում է համաձայնության սկզբունքով ու կազմվում յոթ անդամից, որոնցից երեքը առաջադրվում են Կազմակերպության աշխատակազմից, իսկ չորսը հիմնադրի կողմից: Խորհրդի լիազորությունների ժամկետը չորս տարի է:

36. Խորհրդի կազմում կարող են ընդգրկվել ինչպես հիմնադրի կառուցվածքային ստորաբաժանումների, այնպես և ոլորտի խնդիրներին հասու այլ կազմակերպություններում աշխատակցող ֆիզիկական անձիք: Կազմակերպությունը հատուցում է Խորհրդի անդամների ներկայացուցչական, փոխադրական ու գործուղման ծախսերը:

37. Խորհրդի կազմում Կազմակերպության ներկայացուցիչներն ընտրվում են Կազմակերպության ներկայացուցչական ժողովի կողմից: Կազմակերպության տնօրենը չի կարող լինել Խորհրդի անդամ: Նա մասնակցում է Խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով:

38. Խորհրդի անհատական կազմը հաստատում է հիմնադիրը:

39. Խորհուրդը՝

39.1 ընտրում է Խորհրդի նախագահ, նախագահի տեղակալ և քարտուղար,

39.2 օրենքով և Կազմակերպության սույն կանոնադրությամբ նախատեսված գործունեության բնագավառին, նպատակներին և խնդիրներին համապատասխան՝ կազմակերպության գործունեության հիմնական ուղղությունների մասին առաջարկություններ է ներկայացնում հիմնադրին,

39.3 իրականացնում է ընթացիկ վերահսկողություն Կազմակերպության տնօրենի գործունեության նկատմամբ,

39.4 հիմնադրի կողմից սահմանված կարգով սահմանում է Կազմակերպության շահույթի տնօրինման ուղղությունները,

39.5 հաստատում է Կազմակերպության գործունեության ծրագրերը և կանոնակարգող ներքին փաստաթղթերը,

39.6 հաստատում է իր աշխատակարգը,

39.7 հիմնադիրին առաջարկություններ է ներկայացնում Կազմակերպության տարեկան ծախսերի նախահաշվի նախագծի վերաբերյալ,

39.8 հաստատում է Կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանումների կանոնակարգերը, ներքին կարգապահական և այլ կանոնները,

39.9 քննարկում է Կազմակերպության տնօրենի կողմից ներկայացված տարեկան հաշվապահական և այլ հաշվետվությունները,

39.10 իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ լիազորություններ:

40. Խորհրդի նիստերը գումարվում են Խորհրդի նախագահի կողմից՝ սեփական նախաձեռնությամբ, Խորհրդի անդամների մեկ երրորդի, ինչպես նաև տնօրենի պահանջով: Խորհրդի նիստը գումարվում է նախաձեռնողների սահմանած ժամկետում և կարգով: Խորհրդի նիստերը գումարվում են, որպես կանոն, ամիսը մեկ անգամ:

41. Խորհրդի նիստը համարվում է իրավագոր, եթե դրան մասնակցում է Խորհրդի անդամների առնվազն 2/3-ը:

42. Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Քվեարկության ժամանակ Խորհրդի անդամն ունի մեկ ձայնի իրավունք: Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումն այլ անդամի չի թույլատրվում: Խորհրդի նիստերն արձանագրվում են:

43. Խորհրդի նիստերը, որպես կանոն, բաց են: Խորհրդի նիստերին, ըստ անհրաժեշտության, խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են հրավիրել Կազմակերպության աշխատողները, հասարակության, հիմնադրի և շահառու այլ կազմակերպությունների ներկայացուցիչները:

44. Կազմակերպության աշխատողների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ, աշխատանքային պայմանագրով, Կազմակերպության առանձին ստորաբաժանումների ու աշխատանքային ներքին կանոնակարգերով և այլ իրավական ակտերով:

45. Կազմակերպության գործունեության հիմնական հարցերի քննարկման և կազմակերպական աշխատանքների արդյունավետ իրականացման նպատակով տնօրենին առընթեր ստեղծվում են խորհրդակցական մարմիններ՝ գիտամեթոդական խորհուրդ, ընթացակարգային այլ հանձնաժողովներ:

Կազմակերպության խորհրդակցական մարմիններն իրենց գործառույթներն իրականացնում են իրենց կանոնակարգերի հիման վրա:

Գիտամեթոդական խորհրդի, ինչպես նաև թանգարանային հավաքածուների գնման, կադրերի որակավորման հանձնաժողովների կազմը և կանոնակարգը հաստատում է Կազմակերպության տնօրենը՝ համաձայնեցնելով հիմնադրի հետ:

Խորհրդակցական մարմինների որոշումներն իրականացվում են Կազմակերպության տնօրենի հրամաններով:

VI. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

46. Կազմակերպության ֆինանսական միջոցները գոյանում են քաղաքապետարանի բյուջեից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կազմակերպության լրացուցիչ ֆինանսական աղբյուրներ են՝

46.1 հիմնադրի կողմից սահմանված ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները.

46.2 բարեգործական, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները.

46.3 Կազմակերպության կանոնադրական գործունեությունից ստացված միջոցները:

47. Արգելոց-թանգարանի տարածքում էքսկուրսիաների, գիտակրթական, մասսայական բնույթի միջոցառումների և աշխատանքների կազմակերպման ու անցկացման բացառիկ իրավունքը պատկանում է Կազմակերպությանը: Այլ կազմակերպություններ արգելոց-թանգարանի տարածքներում նշված գործունեությամբ կարող են զբաղվել Կազմակերպության հետ կնքված համապատասխան պայմանագրերի առկայության դեպքում:

48. Կազմակերպության գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործվում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար՝ հետևյալ ուղղություններով՝

48.1 Կազմակերպության աշխատանքային գործունեությունն ապահովող գույքի և նյութերի ձեռքբերում.

48.2 Կազմակերպության աշխատողների կենսաապահովման մակարդակի բարձրացում՝ պարգևատրումներով, հավելավճարներով և այլ խրախուսման միջոցներով.

48.3 Կազմակերպության տեխնիկական հագեցվածության բարելավում, այդ թվում՝ հիմնական միջոցների ձեռքբերում.

48.4 Կազմակերպության աշխատողների որակավորման բարձրացման նպատակով դասընթացների կազմակերպում կամ մասնակցություն կազմակերպված դասընթացներին.

48.5 հիմնադրի կողմից նախատեսված այլ ուղղություններ:

VII. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

49. Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել հիմնադրի որոշմամբ և (կամ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում ու կարգով:

50. Կազմակերպության լուծարման դեպքում կազմակերպության պարտատերերի պահանջների բավարարումից հետո մնացած գույքն ուղղվում է քաղաքապետարանի բյուջե: